ՈՎՔԵ՞Ր ԷԻՆ ԿԱՐՇԵՑՅԱԼ ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԴԵՐԵՆՆԵՐԸ

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Շապուհ Բագրատունու անունով էջմիածնում 1921 թ. լույս ընծայված գործը ժողովրդական ոճով մի պատում է զանազան անցքերի, անձնավորությունների մասին։ Այս գործի երկրորդ՝ հիմնական մասը նվիրված է Արծրունիների տոհմին։ Հեղինակն իրար է խառնել դեպքերն ու դեմքերը, որի հետևանքով ստացվել է կրկնություններով հագեցված մի գործ։ Կրկնությունները շատ են հատկապես այն մասում, որտեղ խոսքը Արծրունյաց տան ներկայացուցիչների մասին է։ Կեղծ Շապուհ Բագրատունու երկասիրության մեջ միահյուսված են իրականն ու ոչ պատմականը։ Հեղինակը թեև որոշ չափով ծանոթ է Արծրունիների պատմությանը, բայց հիմնականում մնում է որպես անիրազեկ բանաքաղ։

Ըստ կեղծ Շապուհ Բագրատունու, Արծրունիների սերնդաբանությունը հետևյալն է. 1) Գագիկ և Սմբատ (եղբայրներ)։ 2) Աշոտ, Գրիգոր և Համազասպ (եղբայրներ)։ 3) Աշոտ։ 4) Գագիկ և Սահակ (Աշոտի որդիները) և Սահակի կինը՝ Աշոտ Բագրատունու դուստր Սմբատուհին։ 5) Գրիգոր Դերեն (սրանց որդին) և կինը՝ Սյունյաց իշխանադուստրը։ 6) Աշոտ (սրանց որդին)։ 7) Գրիգոր Դերեն, Գագիկ, Համազասպ և Գրիգոր Դերենի կինը՝ Բագրատ կռապաշտի դուստրը։ 8) Աշոտ։ 9) Համազասպ, Գերեն և վերջինիս կինը՝ Աշոտ Բագրատունու դուստր՝ Հրանուշը։ 10) Աշոտ, Գուրգեն և Գագիկ։

Արծրունիների այս տոհմաբանությունը սխալ է, ոչ պատմական և չի համապատասխանում Արծրունյաց տան իրական պատմությանը։ Կեղծ Շապուհի «Պատմության» համաձայն՝ Հայոց աշխարհում բուն դրած հակառակության հետևանքով «բաժանեցին զաշխարհ հայոց ի մէջ Բաքրատունեաց և ի մէջ Արծրունեաց, և կալան ի բաժին զաշխարհն հայոց՝ զհյուսիսոյ դեհն տուն Բաքրատունեաց... զՎասպուրականի դեհն տունն Արծրունեաց»[1]։

Արծրունիների սերունդների մեջ զգալի տեղ է հատկացված Արծրունի Դերեններին։ Ընդամին պատմվում է երեք Դերենների մասին, որոնք հայ քննական բանասիրության մեջ համարվել են նույն անձնավորությունները[2]։ Սակայն պատմական փաստերի և կարծեցյալ Շապուհի բերած տվյալներից երևում է, որ Դերենները տարբեր անձնավորություններ են։ Կեղծ Շապուհի մոտ կան Դերենների մասին երեք զրույցներ։ Ըստ առաջին զրույցի, Սահակ Արծրունին, որ զավակ չունի, կնոջ՝ Սմբատուհու, հետ գնում է Աշոտ վանք ուխտի՝ որդի ունենալու նպատակով։ Ունենում են որդի, մկրտել տալիս նույն վանքում և անվանում Գրիգոր։ Ծնողները որդուն դնում են վանքի տրամադրության տակ՝ կոչելով Դերեն անունով[3]։ Դերենը մեծանում է և ցույց տալիս աշխարհիկ սուր

---

1 *Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, էջմիածին, 1921, էջ 37։*

2 *Տե՛ս Մ. Ա ր ե ղ յ ա ն, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 516։*

3 *«Դերենը» «Դերենիկի» փաղաքշական ձևն է, որի բուն իմաստն է «ուխտական զավակ», արմատն է՝ «Դերի»՝ «վանք» (Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1928,*

հակումներ, ուստի հայրը նրան վանքից տուն է բերում և ամուսնացնում սյունյաց իշխանադստեր հետ[4]։

«Դերենի» անվան բացատրությունը կեղծ Շապուհի համար կռվան է հանդիսացել հերյուրելու Դերենի հետ կապված առաջին զրույցը, որն իրականության հետ ոչ մի կապ չունի։ Երկրորդ զրույցի Դերենը հիմնականում համապատասխանում է Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորին (908—943)։ Այս զրույցի Դերենն ունի երկու կրտսեր եղբայր՝ Գագիկը և Համազասպը։ Երեք եղբայրները միմյանց միջև են բաժանում Վասպուրականը։ Վանը Տոսպ-Ռշտունիք գավառի հետ դառնում է ավագ եղբորը՝ Դերենի սեփականությունը։ Այս զրույցում Դերենի աշխարհիկ հակումներն ավելի ցայտուն են դրսևորվում։ Նա ուտելուց և ըմպելուց բացի ուրիշ տարերք չունի և վատնում է իր ունեցվածքը։ Վան քաղաքն էլ գնում է իր Գագիկ եղբայրը։ Բոլոր ծառաները լքում են նրան, բացի Ջաֆրան անունով ծառայից։ Ապա Դերենին այցելում է «Բաղդադի թագավորը», որը, պարտություն կրելով թշնամիներից, եկել էր Դերենի մոտ, նախապես լսած լինելով նրա մասին։ Հյուրն օգնություն է հայցում Դերենից, վերջինս տալիս է իր ձին, զենքերը[5]։ Քիչ ուշ Դերենն է այցելում «Բաղդադի թագավորին», որը մեծ պատիվներ է տալիս Դերենիկին և զորագնդով ճանապարհ դնում Վասպուրական, որին Դերենը վերստին տեր է դառնում։ Շուտով մահանում է Բաղդադի հիշյալ խալիֆը, փոխարինում է Մահմեդը։ Վերջինս չարությամբ էր տրամադրված Հայաստանի նկատմամբ։ Արշավելով Հայաստան, նա գրավում է Դվինը, ներխուժում Վասպուրական, բայց ջախջախվում է Դերենի կողմից։ Ալեզարդ տարիքում իր մահկանացուն է կնքում Դերենը, որի դին ամփոփվում է Վարագա վանքում։

Հայտնի է, որ Գագիկ Արծրունին ևս ուներ երկու եղբայր (Աշոտ և Գուրգեն)։ Ավագ եղբոր՝ Աշոտի, մահից հետո Գագիկն ու Գուրգենը իրար միջև են բաժանում Վասպուրականը։ Վանը՝ Տոսպ-Ռշտունիքով և այլ գավառներով բաժին է ընկնում Գագիկին[6]։

Կարծեցյալ Շապուհ Բագրատունու մոտ հիշված «Բաղդադի թագավորը» հավանաբար ծագումով քուրդ Դայսամ իբն Իբրահիմն է, որ 937 թ. իշխում էր Ատրպատականում։ Երբ Սալարյանների տոհմից Մարզուբանը հարձակվեց նրա վրա, Դայսամ Իբրահիմի բանակից շատ քրդեր և դելմիկներ դավաճանեցին նրան, անցնելով թշնամու կողմը։ Ճարահատյալ Դայսամը «Ցուրայիններից մի քանիսի հետ փախչում է Հայաստան, ապավինելով Ջաջիկ իբն ադ-Դայրանիին[7], որի հետ մինչ այդ նա մտերմություն ուներ։ Եվ Ջաջիկն ընդունում ու պատիվներ է տալիս Դայսամին»[8]։

էջ 512—513։ Գիտակցելով այս անվան իմաստը (արաբերեն «դայր» նշանակում է «վանք»), արաբ մատենագիրները (Միսքավեյ, Իբն-ալ-Ասիր) Դերենիկ անունը հիշում են «Դայրանի» ձևով։ Ըստ կեղծ Շապուհ Բագրատունու՝ «Դերեն» նշանակում է՝ «որդի վանաց» (էջ 38), ըստ Թովմա Արծրունու շարունակողի՝ «Դերենիկ, որ թարգմանի՝ ուխտիւք խնդրեալ ի տնտէէ» (Թ. Արծրունի, Պատմություն տան Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 459)։

4 Շապուհ Բագրատունի, էջ 39։

5 Նույն տեղում, էջ 43։

6 Թովմա Արծրունի, նշվ. աշխ., Թիֆլիս, 1917, էջ 352, 368։

7 Արծրունյաց տան իշխանները երկանուն էին՝ մեկը հայկական, մյուսն օտարամուտ կամ փաղաքշական։ Արաբների մոտ Գագիկ Արծրունի թագավորի անունը հնչում էր «Ջաջիկ» ձևով, որը և օգտագործվում է Իբն-ալ Ասիրի և ուրիշների կողմից։

8 Ибн-ал-Асир, Из Тарих ал-Камиль, Баку, 1940, с. 95, J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930. S. 491.

Պետք է ենթադրել, որ Գագիկ Արծրունու և երկրորդ Դերենի նույնացումը մասամբ կարող էր նաև հետևանք լինել Գագիկի և հոր՝ Դերենիկի, անունների նույնության։ Բացի այդ, նմանօրինակ նույնացումը հետևանք էր նաև այն իրողության, որ Դերենիկ Արծրունի իշխանը (875—885) մեծ ազդեցություն ուներ Վասպուրականում և բացառված չէ, որ պատմական ավանդության մեջ նա ուներ թագավորի համարում։ Հատկանշական է, որ ժամանակակից արաբ մատենագիրները (Միսքաուեյ, Իբն-ալ-Ասիր և ուրիշներ), ելնելով Դերենիկ Արծրունու ազդեցիկ դերից, նրա որդիներին (որոնց թվում և Գագիկ թագավորին) անվանում էին հոր անունով (Իբն-ալ-Դայրանի)։ Այս հանգամանքի բերումով ևս Գագիկը կարող էր կոչվել Դերեն։ Դերենի Բաղդադ մեկնելու դրույցը, ըստ երևույթին, Գագիկ Արծրունու՝ Ատրպատականի ամիրա Յուսուֆի մոտ մեկնելու պատմության խեղաթյուրված վերապատումն է։ Հայտնի է, որ Վասպուրականի դահերեց Գագիկ Արծրունին, գժտվելով Հայոց թագավոր Սմբատ Ա-ի հետ, 908 թ. մեկնում է Յուսուֆ Սաջիի մոտ և նրանից ստանում թագ և «Հայոց թագավորի» տիտղոս։ Ատրպատականում իշխող Յուսուֆը, որպես Բաղդադի խալիֆի կամակատար, կեղծ Շապուհի մոտ նույնացվել է Բաղդադի խալիֆի հետ։

Ընդհանրապես նույնացման տենդենցը կենտրոնական դեր ունի կարծեցյալ Շապուհի մոտ։ Դայսամ Իբրահիմը, որը մի ժամանակ տիրում էր խալիֆայությունից կախման մեջ գտնվող Ատրպատականին, դարձյալ նույնացվել է Բաղդադի խալիֆի հետ։ Կեղծ Շապուհի մոտ Դերենին վաղածանոթ խալիֆի հաջորդը չարությամբ է համակված Վասպուրականի նկատմամբ, արշավում է նրա վրա, բայց ջախջախվում է։ Պատմությունից հայտնի է, որ Ատրպատականի ամիրաները նույնպես արշավել են Վասպուրական և ջախջախվել։ Երկրորդ զրույցի Դերենը վախճանվում է ծեր հասակում։ Ըստ սկզբնաղբյուրների, Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունին նույնպես վախճանվել է ծերացած տարիքում (943 թ., 64 տարեկանում)։ Կարծեցյալ Շապուհի տվյալներն ունեն հակասական բնույթ։ Երկրորդ զրույցի Դերենի և Գագիկ Արծրունու արարքները նույնպես կրում են անհամաժամանակության դրոշմը։

Կարծեցյալ Շապուհի մոտ կարող են նույնացված լինել նաև Գագիկն ու իր հաջորդ Դերենիկ թագավորը (943—958 թթ.), մանավանդ որ Դայսամ Իբրահիմն ապավինել է թե՛ մեկին և թե՛ մյուսին։ Սակայն Դերենիկ թագավորի մասին եղած պատմական աղոտ վերհուշը, ինչպես բնական էր սպասել, կեղծ Շապուհի երկասիրության մեջ ստվերարկվել է Գագիկ թագավորի կյանքի ու գործերի պատմությամբ, ի մի ձուլվել, նույնացվել դրա հետ։

Երրորդ զրույցի Դերենը նույնական է Գագիկ թագավորի հոր՝ Դերենիկ Արծրունի իշխանապետի (875—885) հետ։ Այս զրույցի Դերենը ընդարձակում է Վասպուրականի իշխանության սահմանները, գրավում «Աղի ծովը» (Կապուտան լիճը), Սալմաստը, Հերը, Ճահուկը և այլն։ Դերենը սիրահետում է Հերի և Մարանդի ամիրայի գեղանի դստերը՝ Կուլինարին և բաժանվում իր կնոջից՝ Հրանուշից։ Վերջինս Հայոց Սմբատ թագավորի քույրն էր և բողոքում է նրան։ «Հայոց և վրաց թագավոր, տիեզերակալ» Սմբատը Դերենին կշտամբելուց հետո, գրում է Հերի և Մարանդի ամիրայի որդիներին, հորդորելով սպանել Դերենիկին (այստեղ կեղծ Շապուհը Դերենի փոխարեն առաջին անգամ Դերենիկ է գործածում)։ Դերենիկը իր սովորության համաձայն աշնանը մեկնում է Հերի կողմերը, չանսալով Ապումրվանի և ուրիշների զգուշացնող ձայներին և

զոհ է գնում դավադրության։ Կուլինարը գնում է Դերենի դիակը և ուղարկում Վասպուրականՙ։

Այս զրույցում նույնպես որոշ փաստեր ունեն հակասական բնույթ, թեև դիտելի է, որ ժամանակաշրջանով Դերենը քիչ է տարբերվում Դերենիկ իշխանապետից։ Պատմությունը վկայում է, որ վերջինս եռանդուն գործունեությամբ ընդարձակել էր Վասպուրականի իշխանության սահմանները և Հերի ու Սալմաստի ամիրաներին պարտության մատնելով, նվաճել նրանց գավառները[10]։

Երրորդ զրույցում բավականին տեղ է տրված Դերենիկ իշխանապետի սպանության հանգամանքներին։ Վերջինս, ինչպես հայտնի է, իրոք սպանվել է Հայոց թագավորի (բայց ոչ թե Սմբատ Ա-ի, ինչպես կեղծ Շապուհի մոտ է, այլ Աշոտ Ա-ի) կամակցությամբ։ Հայաստանում Դերենիկի դերը մեծացել էր և սա չէր կարող չանհանգստացնել իշխանաց իշխան Աշոտին։ Թեև, ինչպես վկայում է Ստ. Օրբելյանը, Դերենիկը Սյունիքի իշխանապետ Գրիգոր Սուփանի և ուրիշների հետ «խնդրեն յամիրապետին Ամիր-Ահմատայ և կացուցանեն Աշոտ Բագրատունի թագավոր հայոցՙ»[11]։ Դերենիկ Արծրունին մեծ համբավ ուներ նաև արաբական արքունիքում, որտեղ գտնում էին, որ նա արժանի է ողջ Արմինիայի կառավարչի թեկնածությանը[12]։ Մասամբ այն փաստը, որ Դերենիկը Արմինիայի կառավարչի պաշտոնում Աշոտի մրցակիցն էր և միշտ չէ, որ հաշվի էր նստում վերջինիս հետ, մյուս կողմից Գագիկ Արծրունի Ապումբրվանի և Պարտավի ամիրայի խարդավանքները և, վերջապես, եթե հավատ ընծայենք կեղծ Շապուհ Բագրատունուն, Դերենիկի ամուսնական անհավատարմությունը (այդ մասին կա նաև այլ աղբյուրում[13]), վերջնականապես սրում են Դերենիկի և Աշոտ իշխանաց իշխանի հարաբերությունները։ Աներոջ և փեսայի լարված հարաբերությունների մասին վկայում են նաև Թ. Արծրունին և Հ. Դրասխանակերտցին[14]։ Ըստ Թ. Արծրունու, Դերենիկին զգուշացրել են դավադրության մասին։

Արծրունյաց տոհմում հիշվում են նաև Վասպուրականի թագավոր Դերենիկը (943—958) և Անձևացյաց թագավոր Դերենիկը (թագավորել է Անձևացիքում՝ 1003-ից)։ Սակայն, ինչպես երևում է կարծեցյալ Շապուհի տվյալների և իրական-պատմական փաստերի համադրումից, այս թագավորները չեն կարող նույնացվել Կեղծ Շապուհի Դերենների հետ։ Ճիշտ է Վասպուրականի Դերենիկ թագավորի մոտ նույնպես ապաստանել է Դայսամ Իբրահիմը[15], սակայն այս փաստը կռվան չի կարող հանդիսանալ նման նույնացման համար (ընդսմին 954 թ. նույն Դերենիկի մոտ է ապաստանել նաև քուրդ (Շադդատյան) ցեղապետ Մուհամմադը[16]։

Թ Շապուհ Բագրատունի, էջ 65—71։

10 Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 141։

11 Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1911 թ., էջ 175։

12 J. Markwart, Südarmenien, s. 327.

13 Դ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, Ա., Անթիլիաս, 1951, էջ 18։

14 Թ. Արծրունի, նշվ. աշխ., էջ 363, Հ. Դրասխանակերտցի, նշվ. աշխ., էջ 135—136։

15 Ибн-ал-Асир, с. 101—102, Эпиграфика Востока, X, М.—Л., 1955, с. 24, 36—37.

16 V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953, p. 12—13.

Ասպիսով Կեղծ Շապուհի երկում տեղ գտած տվյալները հյուսված են իրական-պատմական փաստերի շուրջ, որոնք վիպականացվել են, դարձվել պարզունակ, ժողովրդին մատչելի։ Այս երկը, դատելով բովանդակությունից պետք է լինի Արծրունի մատենագրի հեղինակածը, որովհետև, ինչպես ասվեց, հիմնականում վեր է հանում Արծրունիների հետ առնչվող անցքերը, մինչդեռ տվյալ ժամանակաշրջանի ավելի պատվարժան տոհմի՝ Բագրատունիների մասին խոսվում է թռուցիկ վերապահությամբ։ Բագրատունիները հիշվում են միայն այն դեպքում, երբ առնչվում են Արծրունիներին։ Երբեմն նույնիսկ Բագրատունի տան գործիչներն անվանվում են «Արծրունի»[17]։ Այսօրիակ փաստն, անշուշտ, արդյունք էր նաև պատմական տվյալ շրջանում Արծրունիների տոհմի զորեղացման, Վասպուրականի լիիշխան իրավատեր դառնալու իրողության։ Երկի ձեռագիր օրինակը 1917 թ. բերված է Վանա լճի Լիմ կղզու վանքից՝ Արծրունիների երբեմնի տիրույթ հանդիսացող Վասպուրականի Առբերանի գավառից։ Աշխատության լեզուն ու ոճը մոտ է Վանի բարբառին (հաճախ այնտեղ Հ տառը լծորդվում է Խ-ով և այլն)։

132

КТО БЫЛИ ДЕРЕНЫ У ПСЕВДО ШАПУХА

В. М. ВАРДАНЯН

Резюме

В истории Псевдо Шапуха запутаны исторические события, действующие лица. В этом произведении, главным образом, говорится об Арцрунидах, среди которых представлены три личности по имени Дерен, отождествляемые в арменоведческой литературе. Дерены у Шапуха—различные персоны. Первый Дерен—вымышленное имя, вторым Дереном назван Васпураканский царь Гагик Арцруни (908—943), третьим Дереном является его отец, Васпураканский князь Дереник Арцруни (875—885).

Анализ данных показывает, что в основе труда историка лежат реальные факты, а сам Псевдо Шапух принадлежит к роду Арцруни.

17 Տե՛ս Շապուհ Բագրատունի, նշվ. աշխ., էջ 52, 69։